

497

3474

491.99-8

4-87

2010


2002

491.542-81
4-92

Հ.Ա.Խ.Հ.



ԳՐԱԳԵՏ



ԴԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ

428
56-97

1925

428
56-90

491.99-8
9-87

Գ Ր Ա Գ Ե Տ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քանի դեռ մեզ մոտ կա անգրագիտու-
րյուն, ֆաղափական լուսավորության մա-
սին խոսք չի կարող լինել: Անգրագետը
ֆաղափականությունից դուրս է:

Լ Ե Ն Ի Ն

5598

Կ Ա Ջ Մ Ե Ց Ի Ն

ՔԱՂԼՈՒՍԳԼԽԻԼԱՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Զորքող տիպ.



454

821
9P-ժԸ

ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻՆ

Ներկա հրատարակութեան մեջ, նախկին փորձերի հիման վրա, արված են միջանի փոփոխութիւններ և ուղղումներ:

1. Հնչյուններն անմիջապէս առաջին դասից չեն դասվում, այլ 6-7 դասից հետո, յերբ բառերի ու վանկերի գծագրական պատկերը յուրացնելու մեջ բավականաչափ վարժվել են:

2. Անկապ, միտք չարտահայտող վանկերը վերացված են:

3. Առաջին դասն սկսվում է բանավոր զրույցով, վորի նյութն է առաջին պատկերը, իսկ նպատակը պիտի լինի պարզաբանել I լողունգի «ուսումը ուժ է» իմաստը:

Մեր ցանկութեան հակառակ հնարավոր չեղավ յուրաքանչյուր լողունգի իմաստը նկարով արտահայտել. աշխատել ենք մեջ ընդ մեջ այդ բացը լրացնել:

4. Մաթեմատիկական բաժինը կոմպլեքսային սխտեմի հիմունքներով զուգընթաց տարվում է նյութի համապատասխան տեղում (տեսական ցուցմունքներ տես «Մեթոդական ժողովածու» (ձեռնարկ լիկ-կայան. ուսուցիչն. համար):

5. Վերոջ դեպքերում դասատուներին ոգնելու նպատակով հարցեր ու ցուցմունքներ են դետեղված եջերի ստորև:

6. Միջանի վարժութեան նոր նյութ է ավելացրած և տեղ-տեղ մշտեքերն ավելի կապակից փոփոխութեան են յենթարկած:

7. «Ընթերցարան» բաժինը հարստացրած է նոր հոդվածներով, վստանավորներով և նկարներով:

Դասագիրքը կազմված է Մոսկվայի համառուսական մեթոդիստների կոնֆերենցիայի կողմից (1922 թ. 7—12 սեպտ.) ընդունված ամբողջական բառերի վերլուծական-համադրական (անալիզ-սինտեզ) մեթոդով (տես «Մեթոդ. ժող.») Այս մեթոդով առաջին քայլից վարժեցնում են սովորողներին կարդալ ու ըմբռնել միանգամից ամբողջ բառերի բառապատկերները:

Նախադասութիւնը—լողունգը—ամբողջական բառերով կարդալ սովորելուց հետո բաժանում են հատ-հատ բառերի (վերլուծում). այդ բառերը տեղափոխելով, յիտ ու առաջ տանելով ստանում են նոր նախադասութիւն (համադրում): Այս վարժութիւններից հետո բառերը բաժանում են վանկերի (վերլուծում կամ անալիզ) և այդ վանկերից կազմում են նոր բառեր, նոր մտքեր (համադրում կամ սինտեզ):

VII-դ դասից սկսում են բառերից հնչյուններ դուրս բերել—վերլուծել, ստացած հնչյուններից—նոր վանկեր, բառեր ու մտքեր կազմել-համադրել:

Սկզբում պարապմունքների զխավոր նպատակը լինելու յե «կարդալու գաղտնիքը» յուրացնելը, իսկ գիրը կամ արտանկարումը միայն մի ու-



946-91
84483-սկ

Տիւրամ 15,000

Պետրոսի առաջին տպարան վարչապալատում

ժանդակ միջոց և հանդիսանալու մոտոր (շարժողական) հիշողութեան շնորհիվ ամբողջովն բառերի ու վանկերի մտապատկերները:

ՄԻՔԱՆԻ ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Առաջին դասն սկսվում է բանավոր զրույցով: Պարզ ու հասկանալի բառերով, սովորողների մասնակցութեամբ պետք է նկարագրել I պատկերը և աշխատել այդ զրույցի միջոցով պարզաբանել I լողունգի խմաստը (հարցերը տես եջ I-ին): Հետո ուսուցիչը զրատախտակի վրա պարզ ու խոշոր տպագիր տառերով գրում է ամբողջ լողունգը, ապա վորոշ ու հատու առգանութեամբ կարդում է գրածը, վորպեսզի սովորողները բառի հնչյունական կողմը զուգորդեն նրա գծագրական պատկերի հետ: Նույնը կրկնում են սովորողները: Նրանք արտանկարում են բառերը և կարդում իրենց գրածը: Արտանկարելու միջոցին պետք է խիստ հետևել, վոր գրիչն այնպես շարժեն, ինչպես պահանջվում է տառերը գրելու համար, ապա թե վոչ, նրանք կարող են ներքևից սկսել տառի նկարելը, և այսպիսով ձեռագրի անցնելիս նոր գծավարութեաններ առաջ կգան: Առաջարկում ենք լողունգը խոշոր տառերով գրել բայն շերտ թղթի վրա այնպես, վոր կարելի լինի բառ առ բառ ծալել, վորպեսզի նախադասութեան վերլուծում-համադրումը պարզ ու վորոշ լինի. նույնը և տառերի ու վանկերի վերլուծման համադրութեան զեպքում: Հնչյունները դատելու միջոցին կարելի յե ոգտվել հատ-հատ շարժական տառերից: Նույն վարժութեաններն անձամբ կատարում են սովորողները: Մեթոդական այս ընթացքը վերջին դասերին խիստ չի պահպանվում, վորովհետև շատ բան ավելորդ կրկնութեան և դառնում: Այսպիսի աշխատանքները նոր են կիրառվում մեր կյանքում, հազիվ 2-3 տարվա անցյալ ունեն, բնական է, ուրեմն, վոր այս դասագիրքն ունենա թերութեաններ: Ուստի կենդրոնները հասակավորների անգրագիտութեան վերացման դպրոցական գործին մոտիկ կանգնած մանկավարժներին և դասատուներին փորձից հանած իրենց դիտողութեանները հաղորդել քաղուստով վարժապարտ-դասընթացային բաժնին:

Քաղաքական լուսավորության գլխավոր վարչության
դպրոցա-դասընթացային բաժին



I
ՈՒՍՈՒՄՐ ՈՒԺ Ե

ՈՒԺ Ե ՈՒՍՈՒՄՐ
ՈՒՍՈՒՄՐ ՈՒՆԵՍ՝ ՈՒԺ ՈՒՆԵՍ
ՈՒՆԵՍ ՈՒՍՈՒՄՐ՝ ՈՒՆԵՍ ՈՒԺ
ՈՒԺ ՈՒՆԵՍ, ՈՒՍՈՒՄՐ ՈՒՆԵՍ:

II
ՈՒ-ՍՈՒ-ՄՐ ՈՒԺ Ե
ՈՒ-ՍՈՒՄՐ ՈՒ-ՆԵՍ՝ ՈՒԺ ՈՒ-ՆԵՍ
ՈՒՍՈՒՄՐ ՈՒ ՈՒԺ ՈՒՆԵՍ
ՈՒԺ ՈՒ ՈՒՍՈՒՄՐ ՈՒՆԵՍ:

Զրույց. — Ի՞նչ է նկարած այս պատկերի վրա:
Ովքեր են գնում դպրոց:
Ո՞ւմն է այժմ ուժն ել, ուսումն ել:

ուշ լինի՝ նուշ լինի

նուշ լինի՝ ուշ լինի
 լինի ուշ՝ լինի նուշ
 լինի ուժ՝ լինի ուշ
 ուսում լինի՝ ուշ լինի
 ուժ ու ուսումը նուշ լինի:

IV

ուշ լի-նի՝ նուշ լի-նի
 ու-նի ու-սում, ու-նի ուժ
 ու-մը լի-նի ու-սում-ը
 լի ու լի ուժ ու-նի
 ուշ է ելի նուշ է
 ուժ ունի լի ու լի
 ուշ ուսումը ելի ուժ ունի

Անգրագիտութեան վերացման դեկրետը հայտարար-
 վեց 1921 թվի սեպտեմբերի 21-ին:

Հարցեր. — Ինչո՞ւ փոքր հասակում գրել-կարդալ չեք սովորել:
 Վճրտեղ ավելի շատ անգրագետ կա — գյուղո՞ւմ
 թե քաղաքում:
 Ինչո՞ւ գյուղում շատ կա:

V

ով կարդա՞ նա մարդ ա

ով մարդ ա՝ նա կարդա
 նա կարդա, ով մարդ ա
 նա մարդ ա, ով կարդա
 ով ուժ ունի, նա կարդա

ով կար-դա նա մարդ ա
 ա-սում է կար-դա
 նա ա-սում է ուշ է
 ուշ լի-նի, ա-նուշ լի-նի
 ով է մարդ
 նա է մարդ, ով ուսում ունի

VII

նա մարդ ա
 ա-սա սա
 ու-սում, ուժ, ում, ուս
 նա, ու-նի

ա Ա
 ս Ս
 ու Ու
 ն Ն

սա կարդա, նա կար անի
 ով կար ունի—սուս անի

VIII

շինականը շինարար է

շինարար է շինականը
 շինական կարդա ու շինի
 ասան, ուսումը ուշ է, ելի անուշ է
 ով ուսում ունի, նա ուժ էլ ունի
 շի-նա-կա-նը շի-նա-րար է
 շի-նա-կան կար-դա ու շի-նի

IX

շի-նի, լի-նի, ու-նի
 ուշ է, ելի նուշ է
 ում, ասում, մի, մարդ
 կարդա, կար կարի

ի ի
 ե ե
 ը մ
 կ կ

Նունե

Նունեի մարդը շինական է, նա ուսում
 ունի, ուժ ունի—նա շեն է
 Նունեն էլ ուսում ունի, նա կար էլ կանի
 իլիկ էլ կը մանի ու շեն կը լինի

X

Ով վոր շինի՝ շեն կը լինի

շեն կը լինի՝ ով վոր շինի
 ով կարգա ու շինի, շեն ու ուժով կը լինի
 շինարար մարդը շեն կը լինի
 մե-նակ մար-դը ան-ուժ է
 մի-ա-սին շի-նի, վոր ա-վե-լի ու-ժով լի-նես
 վոր, վար, վեր
 ով, որ, նոր
 կար ա-րա, վար արա
 ուժ, ու-ժը
 շինիր շինական
 շինիր շարունակ
 լի ու կիրակի
 շինիր ու շարիր
 կարգա ու վարիր

վ Վ
 ո Ո
 ր Ր
 Տ Տ

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
1	2	3	4	5	6	7	8	9	10

Հարցեր. — Վճրյերորդ գասն ենք պարագում:
 Ուրեմն քանի՞ դաս ենք պարագել:
 Այժմ վճրյերորդ ամիսն է:
 Բանի շաբաթ է, դպրոց եք գալիս:


XI

Կարմիր գրոշակը շինականի գրոշակն է

շինականի գրոշակն է կարմիր գրոշակը
 կար-միր գրո-շա-կը շի-նա-կա-նի գրո-շակն է
 մեր գրո-շա-կը կար-միր է

գրոշ, դաս, դու, դա
 գրոշակը, դա-սը, ու-ժը
 շեն, շինի, շիշ, նուշ
 լի-նի, ե-լի,

դ Պ
 ք Ք
 շ Շ
 լ Լ



Կարմիր գրոշակը ուժ ունի.
 ով վոր կարմիր գրոշակ ունի,
 նա ուժ էլ կունենա, ուսում
 էլ, ով ուսում ունի, նա շինա-
 րար ու շեն կը լինի*:

Յերևանի ազգաբնակչության հարյու-
 րից 50-ը կին է, այսինքն 50 տոկոսը
 կին է, 50 տոկոսը տղամարդ**:

* Միանիշ թվերից անցնել յերկանիշների: Հարյուրը անցնելու մի շո-
 ցին ոգտվել դեպքից և բացատրել տոկոսի գաղափարը. կենսական խնդիր-
 ներ և դիտարկումներ կաղմել:

** Հարցեր. — Յերբ կատարվեց Հայաստանի խորհրդայ
 նացումը—1920 20/XI:
 Վճր թվին եր Ռուսաստանի մեծ հեղափոխությունը—1917 7/XI:
 Ել ով կարմիր գրոշակ ունի, մեր գրոշակը ինչո՞ւ յե կարմիր:

XII

Ով աշխատի՝ նա ուտի

նա ուտի՝ ով աշխատի
 աշխատիր, կարգան, շինիր—շեն կը լինես
 ով աշ-խա-տի նա ու-տի

ու-տի, տի-րի	յր Ա
աշ-խա-տիր, խո-սիր	խ խ


կարմիր աշխատավորը շինարար է

Աշխատիր վոր ուտես

Իաշտում աշխատիր, տանը սովորիր:

Մի ժամանակ աշխատավորը շատ աշխատում էր, գատարկ էր նստում: Նա անուսում էր ու անուժ: Ուժն ու ուսումը տերտերինը, գրամատերինն ու իշխանին էր: Մեր որով ով աշխատի, նա կուտի. աշխատավորն իր վաստակի տերն է:

Հարցեր. — Այսոր վերջերորդ գամն է: Նայեցեք ժամացույցին — քանի՞ ժամ կա նշանակված. ինչո՞ւ. (բացատրել-ցերեկ և գիշեր). որը քանի՞ ժամ ունի:



Ուսումը ուժ է

Պատու՞ր ուժ է

Ուսում ունես՝ ուժ ունես

Պատու՞ ունես՝ ուժ ունես

Ուշ լինի՝ նուշ լինի

Ուշ չինի՝ նուշ չինի

Ով կարգա՞ նա մարդ ա

Ով կարգա՞ նա մարդ ա

Շինականը շինարար է

Շինականը շինարար է

Ով վոր շինի՞ շեն կը լինի

Ով վոր չինի՞ շեն կը չինի

ու Ա տ է

Տ Մ ա Ա Տ Տ

լ Լ ի ի շ Ծ

կ Կ ն Ն

ա Ա ր Ր

վ Վ ո Ո

Ով աշխատի՞ նա ուտի

Ով աշխատի՞ նա ուտի

Կարմիր գրոշակը շինականի գրոշակն է

Կարմիր գրոշակը շինականի գրոշակն է

յր Ա ի ի

Շ Ը Դ Դ

Մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար

Մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար.

Մե-կը բո-լո-րի հա-մար՝ բո-լո-րը մե-կի

բո-լորը բեր

հա-մար հա

բ Բ

հ հ

Ի ու ուսում ունես — հաշվիր.

հաշվիր մեկ մեկ բոլորին.

վուշ ու բամբակ ունես՝

մշակիր, մանիք, շորեր կարիր,

բամբակը լավ մշակիր, վոր շատ ստանաս, շատ էլ շոր կունենաս.

Շինականն աշխատում է բանվորի հետ ու նրա համար:

Բանվորն աշխատում է շինականի հետ ու նրա համար:

Շինականը բանվորին տալիս է սնունդ:

Բանվորը շինականին տալիս է շորեր:

Գեղ կանգնի՞ գերան կը կուտրի

Գեղ կանգնի՞ գերան կը կուտրի

գեղ կանգ-նի՞ գե-րան կը կուտ-րի

գե-րան, գեղ, գեր

գեղ, գեղ, աղ, աղա

Կանգնիր ամուր շինական
Գեղի տերն ու տիրական
Երեկ աղեն եր տերը
Աղեն ու իր տերտերը
Տերն ես հիմա ամենի
Գնա հանգիստ աշխատի

Կանգնիր ամուր շինական
Գեղի տերն ու տիրական
Երեկ աղեն եր տերը
Աղեն ու իր տերտերը
Անտրն ես հիմա ամենի
Գնա հանգիստ աշխատի

Սիրելի ընկեր

Նամակ եմ գրում, վոր իմանաս, վոր մեր գե-
ղում հիմա գրագետ շատ կա: Բոլորն աշխատում
են գրել-կարդալ սովորել:

4—5 տարի հետո բոլորն ել գրագետ կը լինեն:
Եղ որը բախտավոր որ կը լինի մեր գեղի համար:
Շուտ-շուտ նամակ գրիր. տեսնում ես հիմա գրա-
գետ եմ, կարող եմ նամակներդ կարդալ:

Բարևներ բոլորին
Ընկերդ

7/VIII

1897 թվին Կովկասի ազգաբնակչության
գրագիտական վիճակը

Տղամարդկանց վոր սովոր 0/0		Կանանց վոր 0/0-ը		Տղամարդկանց և կանանց վոր 0/0-ը	
Գրագետ	Անգրագետ	Գրագետ	Անգրագետ	Գրագետ	Անգրագետ
18 ⁰ /0	82 ⁰ /0	6 ⁰ /0	94 ⁰ /0	12 ⁰ /0	88 ⁰ /0

Համեմատել և կազմել շրջանաձև դիագրամներ:
Այսուհետև կարելի չե գրավոր աշխատանքների որվա և ամսաթիվը
գրել առ լրիվ կամ կրճատ ձևով (տես նամակը):

Կարմիր բանակը
մեր յերկրի պաշտպանն է

Կարմիր բանակը մեր յերկրի պաշտպանն է

յեր-կրի, յես, յեվ | յ Յ
պաշտ-պան | պ Մ

Ո՞վ է պաշտպանում մեր յերկիրը--

— Կարմիր բանակը:

Ո՞ւմ է պաշտպանում Կարմիր բանակը--

— Աշխատավորին:

Ո՞վ է կարմիր բանակայինը--

— Նույն աշխատավորը:

Այսոր նա սուր ունի, վաղը մանգաղ և արոր
կուռնենա:

Կարմիր բանակայինը գրագետ է, վորովհետև
ուսումն է ուժը. անգրագետն անուժ է:

Հարց.— Յերբ է Կարմիր բանակի ստեղծ:

Հողը գյուղացուն գործարանը բանվորին

հողը գյուղացուն, գործարանը բանվորին

գոր-ծա-րան, գործ, ծույլ		Յ ծ
գյու-ղա-ցի ցո-րեն ցա-նիր		Մ ց

Յարերի ժամանակ բանվորն աշխատում էր 10—12 ժամ և ստանում էր միայն կոպեկներ: Նա ապրում էր խավար ու խոնավ նկուղներում: Ծույլ շահագործողները վայելում էին նրանց վաստակը և ապրում էին պալատներում, մեծ-մեծ տներում, լույս սենյակներում հանգիստ, անհող և ուրախ:

Գյուղացին էլ էր շահագործվում: Նա սակավահող էր, բայց կերակրում էր ծույլ ու անգործ ազանների մի մեծ բանակ:

Շահագործման ծանր լուծը այլևս անտանելի յեր աշխատավորների համար:

1917 թվի հոկտեմբերին բանվորն ու գյուղացին միացած սապարեցին ցարի լուծը և հաստատեցին իրենց խորհուրդները:

Խորհուրդներին մասնակցում են միայն բանվորն ու գյուղացին և նրանց պաշտպան կարմիր մարտիկը:


Ինչ փոքր ցանկես՝ այն կը հրչես

Ով ցանել է՝		ով ցանել է՝
վախ չունի,		փախ չունի,
ով հնձել է՝		ով հրչել է՝
հոգս չունի.		հոգս չունի.

ձեր հունձը հնձիր		Չ է
չունի, չե, չկա		Չ չ

Հնձվորը

Գյուղացին գնաց արտը,
ցորենը հնձեց,
խուրձեր կապեց,
սայլին բարձեց,
տուն բերեց:
Հոգս չունի, վախ չունի.
ցորենը շատ, հացը շատ:
Ինչ ցանել է՝ հնձել է.
Աշխատել է՝ ուտում է:



Կարմիր ռանչպար ձեռք տուր բանվորին

Կարմիր ռանչպար, չեռք փուր բանվորին

ռանչպար, կուռ, կուր | Ռ ռ

ձեռք-ձեռքի տանք մենք | Ք Ք

Իսկ ռանչպար ես, իսկ յես՝ բանվոր,
մենք յեղբայր ենք, ընկեր հին.
մենք չենք տեսել ուրախ մի որ
ու լացել ենք դառնագին:

Հարցեր. — Ի՞նչով և ո՞րնու՞մ բանվորը ռանչպարին, ի՞նչ և
տալիս նրան և փոխարենը ի՞նչ և ստանում:

Կռիվն անեղ կուեց ի մի
մեր բախտն ու կամքն անսասան.
ձեռք-ձեռքի տանք, գնանք հիմի
դեպի կարմիր ապագան:

Պու ռանչպար ես, իսկ յես բանվոր,
ձեռք յեղբայր ենք, ընկեր հին
ձեռք չենք փեսեղ ուրախ մի որ
ու լացել ենք դառնագին:
Կռիվն անեղ կուեց ի մի
մեր բախտն ու կամքն անսասան.
չեռք-չեռքի փանք, գնանք հիմի
դեպի կարմիր ապագան:

Վոչ մի կտոր չցանամ հող չթողնել


Վոչ մի կտոր չցանամ հող չթողնել
Թե վոր ցանես, թե վոր հնձես, կուշտ կը լինես.
անցան, անվար հող չթողնես

Թողնել, թող, թող | Ք Ք

Ընկեր

Յեթե դու հողդ չպարարտացնես, չվարես, չցա-
նես, դատարկ կը նստես: Հիմա դու ավելի շատ հող
ունես, դու հողիդ տերն ես. լավ պարարտացրու, այդ
մասին խորհուրդ հարցրու գյուղատնտեսից, սովորիր
և ընկերներիդ սովորեցրու:

Աշխատեք ընդհանուր ուժերով մեքենաներ ձեռք
բերել: Այդ ձևով յեթե վարեք, ցանեք, հնձեք, կալսեք,
դուք ել կուշտ կը լինեք, մեր յերկիրն ել կը շե-
նացնեք:



Թվաբանական աշխատանքներ:

Կազմել նույն բնույթով խնդիրներ:

Չ ե ո ք ո վ		Մ ե ք ե ն ա յ ո վ	
Ցանել .	3 դեռ.	Ցանել .	5 դեռ.
Հնձել .	1/2 ,,	Հնձել .	5 ,,
Թոտ հարել	1 ,,	Թոտ հարել	4 ,,

Կինը հիմա ազատ քաղաքացի յե

Կինը հիմա ազատ քաղաքացի յե

ա-զատ, զատ | 2 Կ

Մինչև խորհրդային կարգերի հաստատվելը կինն իրավունքներից զուրկ էր. նա ազատ քաղաքացի չէր: Նա առանց ամուսնու կամքի տեղից շարժվելու, ձայն հանելու իրավունք չուներ:

Հիմա կինը իր յերկրի շինարար գործերում մաս ունի:

Կինն իրավունք ունի ընտրելու և ընտրվելու: Նա իր աշխատավոր յեղբոր և ամուսնու ազատ ու հավասար ընկերն է. նրանց հետ վերաշինում է մեր յերկիրը:

Գյուղումն էլ կինը հիմա անխոս, անլեզու չէ. նա ձգտում է գրագետ լինել և միացել է պրոլետարների հզոր բանակին:

Մարտի 8-ը աշխատավորուհու տոնն է

Կազմել դիպլոմներ. — Դասարանի վճիռ 0/0-ը կին է. վճիռ 0/0-ը տղամարդ. քանինն է բանվոր, քանի՞որ արհեստավոր և այլն:

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

Չերն է ուժը, ձերն է կամքը,
ձերն է իշխանությունը.

ուժեղ կռվի դուք պատրաստվեցեք.
ով ձեզ հետ չէ,
նա կը հաղթվի:

Մեր տգիտությունից ու անմիաբանությունից ոգավում և մեզ շահագործում էյին բուրժուաները և հոգևորականները:

Հիմա այլևս չեն կարող շահագործել:— Կեցցե բոլոր յերկրների աշխատավորների միությունը:
Կեցցե ուսումն ու գրագիտությունը:

Անգրագետ

Իր վորդուց մայրը

նամակ ստացավ,

կարոտած սիրտը

վեր ու վար յեղավ:

Նայում է նամակին—

սիրուն նշաններ,

բայց այդ գրերի

միտքը չգիտեր:

Տղան ինչ է գրել—

պետք է իմանար,

բայց նրա տանն էլ

կարդացող չկար:

Դուրս յեկավ փողոց,

մի բարի նստեց,

գյուղի դպրոցի

սանին պատահեց:

Յեվ նրան կանչեց.

«Դպրոցի տղա,

մոտս յեկ, ապրես,

նամակը կարդա»:

Հառաջ, դեպի հետ ճանապարհ չկա
 հառաջ, դեպի հետ ճանապարհ չկա

Ճա-նա-պարհ, ճար, ճորտ, | Հ Հ
 ա-ռաջ, ջուր | գ Չ

Ճանապարհը դեպի հետ տանում է դեպի շա-
 հագործում, դեպի տգիտություն ու ստրկական
 վիճակ:

Մենք շախշախել ենք բռնակալների, կալվածա-
 տերերի և կապիտալիստների ճնշումը: Մեր բախան
 ու վիճակը հիմա մեր ձեռն է: Մենք քանդել ենք
 մեր հետևից բոլոր կամուրջները: Մենք գնում ենք
 առաջ, դեպի հետ ճանապարհ չկա:

Մենք շախշախեցինք հին աշխարհը
 ու շինում ենք նոր աշխարհ,
 ուր վոչ ադա կա, վոչ ստրուկ,
 վոչ ճորտեր կան, վոչ տգրուկ:

Բոլոր ֆրոնտներում մերն է հաղթանակը

Բոլոր ֆրոնտներում մերն է հաղթանակը

Ֆրոնտ-ներ, ֆրոնտ | Ֆ Ֆ

1. — Առաջին ֆրոնտն արտաքին և ներքին ազ-
 մական ֆրոնտն էր:

Մենք հաղթեցինք այդ ֆրոնտում:

2. — Յերրորդ ֆրոնտը շինարարական ֆրոնտն
 էր: Մենք վերականգնեցինք գործարանները, մշակե-
 ցինք հողն ու հանքը, հաղթահարեցինք սովը. ծածկե-
 ցինք մեր մերկությունը:

3. — Յերրորդ ֆրոնտը լուսավորության ֆրոնտն
 է: Մենք տգետ եյինք և անգրագետ: Մենք ճիգ ու
 ջանք ենք գնում գրել-կարդալ սովորելու, լուսավոր-
 վելու: Լուսավորության ֆրոնտումն էլ մենք կը
 հաղթենք:

Մնացել է բերզը մեզ.
 հաղթանակի յերթը մեզ.
 անց են կացել ով կային.
 հիմի յեկավ հերթը մեզ:

Փառք ընկածներին


Փառք ընկածներին

Փառք | Փ փ

Մեր հեղափոխական ուղին փշոտ է յեղել: Հեշտ
 չի փշովել դարևոր ամրապնդված սև ուժը—կապի-
 տալի և յեկեղեցու միությունը, թագավորի բռնա-
 կալությունը:


Այդ սև ուժի ձեռքն էր զենքն էլ, զորքն էլ, փողն
 էլ, մեքենան էլ: Աշխատանքի ազատագրման մեծ
 կռվում մենք թանգազին զոհեր ենք ունեցել. նրանց
 արյան գնով ենք մենք փրկվել: Նրանք մեռան, բայց
 նրանց գործն անմահ է:

Փառք մեծ զաղափարի զոհերին:



Կոմմունիզմի համաշխարհային առաջնորդներն
էին—


Կարլ Մարքս
Ֆրիդրիխ Ենգելս
Վլադիմիր Իլյիչ Ռուսսևիչ-Լենին



Ամեն մի պետութիւն ունի
իր գերբը. բոլոր խորհրդային
յերկրների գերբը մուրճն ու
մանգաղն է:

Խորհրդային Հայաստանի գերբի նշանագրերն են.

Հ. Ս. Խ. Հ.



Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային
Հանրապետութիւն:

1922 թ. 30 գեկտեմբերի բոլոր մանր հանրա-
պետութիւնները՝ Խորհրդային Ռուսաստանը, Ուկ-
րաինան, Բելորուսիան, Ազրբեջանը, Վրաստանն ու
Հայաստանը միացան և կազմեցին Ս. Խ. Հ. Մ., վոր
նշանակում է՝

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետու-
թիւնների Միութիւն:


Որացույց


ՀԵՂԱՓՈՆԱԿԱՆ ՏՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՍԳՈ ՈՐԵՐԻ

1. Հոկտեմբերյան Հեղափոխութիւնը — 7 նոյեմբերի
2. Փետրվարյան Հեղափոխութիւնը — 12 մարտի
3. Բանվորուհիների միջազգային տոն — 8 մարտի
4. Պրոլետարիատի միջազգային տոն — 1 մայիսի
5. Միջազգային յերիտասարդական որը — յուրաքան-
չյուր սեպտեմբերի 1 կիրակին
6. Բանվորների գնդականարումը Պետերբուրգում ցարի
հրամանով և վ. Ի. Լենինի մահվան որը 22 հունվ.
(9 հունվ.)
7. Ս. Խ. Հ. Մ-ն. տոնը 6 հուլիսի
8. Հայաստանի Խորհրդայնացումը 29 նոյեմբերի:

Ա ա	Բ բ	Գ գ	Դ դ	Ե ե	Զ զ	Ը ը
Ս ս	Ր ր	Պ պ	Պ պ	Ե ե	Զ զ	Ր ր
Թ թ	Ժ ժ	Ի ի	Լ լ	Խ խ	Շ շ	Կ կ
Ք Ք	Տ տ	Բ բ	Լ լ	Խ խ	Շ շ	Կ կ
Հ հ	Չ չ	Ղ ղ	Ճ ճ	Մ մ	Յ յ	Ն ն
Խ խ	Չ չ	Ղ ղ	Ճ ճ	Մ մ	Յ յ	Ն ն
Ո ո	Չ չ	Պ պ	Ղ ղ	Ռ ռ	Ս ս	Վ վ
Ո ո	Չ չ	Պ պ	Ղ ղ	Ռ ռ	Ս ս	Վ վ
Տ տ	Ր ր	Յ յ	Փ փ	Ք ք	Ֆ ֆ	Ու ու
Ս ս	Ր ր	Յ յ	Փ փ	Ք ք	Ֆ ֆ	Ու ու

1 2 3 4 5 6 7 8 9 10
I II III IV V VI VII VIII IX X





Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն

Հ ա տ ի կ

Լույսը բացվում է, շուտ արտը գնամ,
պատուեմ սուր խոփով յես կուրծքը հողի,
իմ սիրուն հատիկ, բեզ նրան պահ տամ
մինչև որերը ամուսն արևի:

Թագեմ բեզ, հատիկ, և դարդս բեզ հեռ:

Ծլիր, կանաչիր, փուկն սավանով

ծածկիր իմ արար փողջ ալեծածան:

Նոր այն ժամանակ անուշ շրշուկով

տուր շարդված սրտիս մի բուն հանգստյան:

Յերկրագործ

Արև չձագած մաճն է բո ձեռին.

յոթ գույգ յեզ, գոմեշ լծած գութանին
ծրում ես, պատուում դու կոշտ ու խոպան,
լեռներ ու դաշտեր, հանդ ու անդաստան:

Ցանում ես ցորեն, կորեկ ու գարի,

հաճար ու վարսակ, բամբակ ու բրինձ:

Ծլում են ծաղկում ճակատիգ բրտինքով

բո վարած դաշտեր, փոր լի յեր փշով:

Անցնում է գարուն. փոսկեզոծ հասկեր

լըցնում, ծածկում են բո սիրուն արտեր:

Քամին փչում է, արար տատանում.—
կարծես նոր հարս է, հերանց է գնում:
Հասել է ամառ. մանգաղը ձեռիդ
հնձում ես, հնձում խուրձեր կապտում:
Խուրձերը բարդ-բարդ կրում ես, բերում
ու առատությամբ կալումդ դիզում:
Հաշան ես անում, կալում ու դատում,
մաքուր ցորենը տանդ ամբարում,
իսկ չոր դարմանը ձմեռվա պաշար
մարագդ լցնում անասնոց համար:
Յե՛վ յերբ փչում է ցրտաշունչ ձմեռ.
Խրճիթում նստած բո խոփն ես սրում,
արոր ու գութան սարքում պատրաստում,
ու գարնան գալուն նորից սպասում:
Ո՛հ, յերկրագործ, յերկրագործ,
փորքան սիրուն է բո գործ:

Ապրողների համար

Յոթանասուն տարեկան ծերունին պարտեզի մեջ տան-
ձի ու խնձորի ծառ եր տնկում: Ետ աշխատելուց խեղճը
բրանել, ջուր եր դառել:

Մի յերիտասարդ տեսավ ծերունուն և ասաց. «Ծերուկ,
ինչո՞ւ յես իզուր նեղություն քաշում, ինչո՞ւ յես տանջվում,
չարչարվում. մինչև այդ ծառերը արմատ բռնեն, մեծա-
նան, պտուղ տան՝ դու կը մեռնես:»

— Իհարկե կը մեռնեմ, — պատասխանեց ծերունին.
— բայց ինչպես յերևում է՝ դու կարծում ես, թե մարդ
միայն իր համար պիտի աշխատի: Վե՛հ, փորդիս, ուրիշների
համար ել պիտի մտածեք: Ահա, տնկում եմ այս ծառերը.
Թող սրանք մեծանան, պտուղ տան: Թող յես մեռամ լինեմ,
ինչ անենք. — Թող ուրիշներն ուտեն:

Արեւը

(Մտրիկ անցյալից)

Լսեցեք, ընկերներ, յես կը պատմեմ ձեզ իմ փոսկեհեթ
աղջկա մասին:

Նա հիվանդ էր:

Բժիշկը մտավ մեր բնակարանը, տխուր նայեց չորս կողմը, նայեց աղջկաս ու ասաց.

— Խոնավ ե, պետք ե փոխեր ձեր բնակարանը, արեփով սենյակ պետք ե ճարեր:

Ու յես դնացի արև փնտռելու: Շատ հեռու գնացի ու, վերջապես, գտա մի արևով սենյակ: Բայց յերբ վերադարձա, աղջիկս ինձ կանչեց, ձեռք բռնեց ու փակեց աչքերը:

Կարմրած ու ցամաքած աչքերով գնացի արևի մոտ ասացի.

— Հոր արև, մի մեծ բողոք ունեմ քո պեմ. ինչո՞ւ դու մի շողք խնայեցիր իմ աղջկան ու թողիր, վոր նա առանց արև մնա. դ՞ու սպանեցիր նրան:

— Վճշ, — ասաց արևը տխուր դեմքով. — յես մեղավոր չեմ. — գնա, հայտնիր ամբողջ աշխարհին, վոր վերևի հարկը խլեց արևի շողքերը, ստվեր ձգեց ներքևի հարկի վրա ու սպանեց քո վոսկեհեղ աղջկան...

Ասևանց աշխատանքի ապահովումը խորհրդային իրավակարգում

1. Կանայք չեն մասնակցում գիշերային աշխատանքներին.

2. Կանայք ծննդաբերությունից 8 շաբաթ առաջ և 8 շաբաթ հետո ազատ են ֆիզիքական աշխատանքներից, պահելով սոսիալ ստանալու իրավունքը.

3. Ծծկեր յերեխա ունեցող մայրը, բացի ընդհանուր հանգստի ժամերից ոգավում ե նաև առանձին սահմանված ժամանակով մանկանը կերակրելու համար:

Խորհրդային իշխանությանը հարկավոր եև ստողջ յերեխաներ

Մահը յերկու անգամ ավելի գոհ ե տանում անգրագետ ընտանիքից:

Մոր անգրագիտությունից շատանում են մահվան դեպքերը:

Յեթե խոսել կարողանայի, յես կասեյի.

— Մի համբուրեք իմ շրթունքներից:

— Յերեսիս մի հազար և փոշտար. յես կհիվանդանամ ու ինձ վատ կզգամ:

— Կարմրուկից, կապույտ հազից և ուրիշ վարակիչ հիվանդություններից հեռու տարեք ինձ. կարող եմ վարակվել և մեռնել:

— Թեևքիդ յերկար մի պահեք ինձ, այլ հանգիստ պառկեցրեք իմ անկողնում:

— Քաղցրեղեններ և ուրիշ մնասակար բաներ չտար:

— Բերանս ծծակ չդնեք, չթողնեք մատներս ծծեմ:

— Հյուր մի տանեք ինձ, վոչ ել կինո կամ թատրոն. յես կըղայնանամ և վատ կընեմ:

— Քնացնելիս չծեծեք և չպատժեք ինձ:

— Չթմրացնեք ինձ խաշխաշով:

— Գինի, գարեջուր, ողի, սուրճ, թեյ մի խմեցնեք, յես ուզում եմ առողջ լինել:



Հարբեցողությունից ազդեցությունը ծննդաբերության և մանուկների մահացության վրա:		
ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ	Անհաջող ծննդաբեր.	Մանուկների մահաց.
Զգաստ (վոչ հարբ.)	1,8%	13%
Զափավոր խմողներ	5,3%	23,2%
Շատ խմողների	7,1%	32%

Փյուղ ու քաղաք—ուժը հարկաբ

Փյուղից քաղաք են տանում—հաց, միս, յուղ, և ուրիշ սննդամթերքներ: Քաղաքը պետք ունի փյուղի զանազան ապրանքների՝ վուշի, կանեփի—բաթման պատրաստելու, բազուկի—շաքար շինելու և այլն:

Քաղաքից գյուղ են փոխադրում— շաքար, աղ, առեղ-
ներ, թեյ, յերկաթ, մեխ և այլն ապրանքներ:

Գյուղի համար ել շատ բան է պետք— գութաններ,
փոցխեր, գերանդիններ, մանգաղներ և զանազան մեքենա-
ներ, վորոնցով շուտ են գործ տեսնվում:

Քաղաք տեղի գրադիտությունն ավելի յե: Այնտեղ
բարձրագույն դպրոցներ ել կան, վորտեղից դուրս են գա-
լիս գյուղատնտեսներ, յերկրաչափներ, ճարտարագետներ և
ուրիշ շատ տեսակի մասնագետներ:

Քաղաքումն է, վոր տպվում են գրքեր, որացույցներ,
լրագիրներ և ամսագիրներ: Իրանցից է, վոր իմանում ենք,
թե ինչպես պիտի ուղղենք մեր կենցաղն, ինչպես գիտու-
թյունը գործ դնենք մեր ոգտին: Իրանք հարկավոր են բա-
ղաքին ել, գյուղին ել:

Քաղաքը չի կարող ապրել առանց հացի և ուրիշ սը-
նընդամթերքների. գյուղն ևս առանց քաղաքի անճարակ է.
մի յերկու տարի գյուղս կը պահի, բայց հետո փայտով
պետք է վարի, ցանի:

Գյուղ ու քաղաք — ուժը հավաք:

Ոգևի՛ր կոոպերատիվի գարգացմանը

Մեզ մոտ աշխատավորների իշխանությունն է, բայց
առևտուրը գեռ ևս բուրբուրն պետության ձեռքը չի անցել:

Յերբ ամբողջ առևտուրը անցնի կոոպերատիվներին,
այն ժամանակ ապրանքներն ավելի եժան կը լինեն:

Կոոպերատիվը ուժեղ է իր անդամների շնորհիվ. դրա
համար պետք է հաճախես կոոպերատիվի ժողովները, ոգ-
նես նրան թե խորհուրդներով, թե գործով:

Միտդ պահիր հետևյալը.

1. Կոոպերատիվի վարչության մեջ չարչիներ և կուլակներ
չընտրես.
2. Ա՛հեն ինչ գներ կոոպերատիվից, փոշինչ մասնավո-
րից.
3. Ինքդ անդամագրվիր և կանոնավոր վճարիր քո ան-
դամավճարը.
4. Գիացիր, վոր կոոպերատիվը իր շահածը չի կրկնա-
պատկում.

5. Հետևիր, վոր կոոպերատիվում գրքեր ևս ծախվին
հասակավոր անդրագետների համար:

հարց. — Կոոպերատիվի անդամն ևս թե վոչ. դրեցեք տեղական
կոոպերատիվ խանութի անունը և հասցեն.
Կազմեցեք ձեր ամսական ծախսերի ցուցակը.
Համեմատեցեք կոոպերատիվի գները շուկայի գներին հետ:

Ամսուային գիշերը գյուղում

Կուսընկա գիշեր,	Խոնջացած որվան
Յերկինքը պայծառ.	Դառն աշխատանքից,
Մնհամար ասողեր	Վոտնուժոց արած՝
Փայլում են վառ վառ:	Քնած են հանգիստ:
Քնած են այնտեղ	Միայն աղմկում է
Հայի հին գյուղը,	Այս լուսությունը
Մթնած և լուռ է	Գյուղացու սայլի
Գյուղացու խուղը:	Խուլ ձորնչյունը:
Յե՛վ ժիր գյուղական	Յե՛վ նրա գլխին
Ընտանիքն ահա	Կանգնած գյուղացին
Մրահում, կալում	Հորովել է յերգում,
Կամ կտրի վրա՝	Հանգիստ է հոգին:

Չրի՛ կաթիլի ճանապարհորդությունը

I

— Ա՛խ, ինչպես կուզեմ վերև բարձրանալ, վերև, շատ
վերև, են սարի գլխին, են ամպի մոտը, արևի քով, աստ-
ղերին հասնել, — ասաց մի կաթիլ:

— Յես ել եմ ուզում, յես ել, — ձայն տվին ծովից շատ
կաթիլներ. — վերև բարձրանալ, վերևից նայել, թե ինչ կա
այտեղ աշխարհի վրա: Ենտեղից տեսնել սարեր, ձորեր,
անտառներ, դաշտեր, քաղաքներ, ծովեր: Ա՛խ, ինչ լավ կը
լիներ:

II

Արևը լսեց, տաք ճառագայթներ ուղարկեց, Չրի կաթիլ-
ներին վերև կանչեց: Մեր կաթիլները քիչ-քիչ տաքացան,
անտեսանելի գոլորշի դարձան, վերև բարձրացան:

Նրանք շատ, շատ բարձրացան, սարերից ել վերև, ամպերին մոտեցան:

— Եստեղ ինչ ցուրտ ե, — ասաց մի կաթիլ և կուչ յեկավ. — վերևում դժվար ե ապրել:

— Այո, այո, ձայն տվին ամենքը, ինչ լավ կը լիներ, ամառվա պես ներքևում լինելիք:

III

Արևը լսեց. ցուրտ քամի ուղարկեց: Գոլորշիները ցրտից կուչ ու ձիգ արին, իրար մոտեցան, կամաց-կամաց սեղմըվեցին իրար և տեսանելի ամպ դարձան:

— Ի՞նչ մութ ամպեր են, — ասացին մարդիկ ներքևում:

— Ես ինչպես ցուրտ ե, ինչ պաղ քամի յե, — ասացին ամպ դարձած գոլորշիները, ավելի իրար մոտեցան, նորից կաթիլներ դարձան:

IV

— Բարև ձեզ, բարև, սիրելի ընկերներ, — ասացին կաթիլները իրար: Ա՛յ, հիմա լավ ե: Ի՞նչ լավ յեղավ, վոր ելի կաթիլ դարձանք:

— Ի՞նչ լավ անձրև ե գալիս, — ասացին մարդիկ յերկրի վրա:

Խուճբ-խուճբ կաթիլներ գոռում-գոչյունով ներքև են վազում, հողը պատառում, ծաղիկ ու ծառ արմատախիլ անում և առաջ գնում:

V

— Ի՞նչ սոսկալի հեղեղ ե, — ասացին մարդիկ:

— Յես շտապում եմ, շուտ ճամպա տվեք, — ասում եր հեղեղը և առաջ գնում:

Այսպես նա շատ առաջ գնաց, հասավ մեծ գետին:

Հեղեղն այստեղ շուտով կուչ գնաց ու սկսեց գետի հետ հանդարտ հոսել:

Մեր կաթիլներն այսպես վերջապես հասան ծովին՝ իրենց մոր գիրկը:

— Բարձր յեկաք, իմ կաթիլներ, — ասաց ծովը և դըժպեց նրանց:

Լենինյան կոմունիստական յերիտասարդական միություն (Կոմսոմոլ)

Հասակավոր բանվորական կազմակերպությունների հետ միասին զանազան յերկրներում գոյություն ունեն նաև աշխատավոր յերիտասարդության կազմակերպություններ — նրանք կազմում են Լենինյան կոմյերիամիություն:

Ցարի ժամանակ յերիտասարդական կազմակերպություն չկար. ցարական իշխանությունը խիստ հալածում եր ամեն տեսակի կազմակերպությունները:

Հոկտեմբերյան հեղափոխության մեջ յերիտասարդությունը շատ մեծ մասնակցություն ունեցավ և ամեն տեղ առաջին շարքերումն եր:

1918 թվին Մոսկվայում հավաքվեց I Համառուսական կոմյերիամիության համագումարը:

Կոմյերիամիությունը մեծ յեռանդով ոգնում ե խորհրդային իշխանությանը նրա շինարարական աշխատանքների մեջ:

Կոմյերիամիության ազդեցությունն ավելի մեծ ե գյուղում. գյուղական յերիտասարդությունը կոմյերիամիության գեկավարությամբ առաջ ե տանում գյուղի նոր շինարարությունը:

Կոմսոմոլի գատիկը

Չատիկ բերեց կանաչ գարուն մեր դաշտերին ու ձորերին, աշխատանքը հնչեց յեռուն մեր գյուղացու յեբակներում:

Չատիկն յեկավ կանաչներով, հաղթ ու կարմիր ջահերներով. կոմսոմոլն յեկավ գեղով կարմիր խոտքով, կարմիր յերգով:

Տերտերները ահ ու դողով, Փարաջաները ուսերին տափ են մտնում խորաններում՝ «տեր վողորմյան» բերաններում:

Կոմսոմոլը գեղի միջով
անցնում հպարտ ու խիտ շաքբով՝
աշխատանքի հզոր յերգով
ամբողջ գեղը թնդացնելով:

Վողջունում է կարմիր գարնան,
վոր դուրս բշեց ցուրտ ձմեռվան.
Վողջունում է աշխատանքը,
վոր ստեղծում է ամեն բան:

Ու յերգում է Կոմսոմոլը.—
«Աշխատանքի տոնն է ես որ.
տերտերները հեռու կանգնեն,
բավական է գեղին խաբեն»:

Ու յերգելով գեղի միջով
անցնում են մեր ջահելները.
տերտերները ահ ու դողով
պահ են մտնում խորանները

Մերմնացան մերկևու

Ցանել կարելի յե ձեռքով կամ մեքենայով: Ձեռքով
դժվար է արտը հավասար ցանել: Մեքենայով ցանքան
ավելի արագ է կատարվում. մինչդեռ ձեռքով մի որում
3 դեսյատին հազիվ կարելի յե ցանել, մեքենայով մինչև
5 դեսյատին կարող ենք ցանել:

Մեքենայով ցանքսը լինում է շարքերով և սերմ ել
բիչ է գնում՝ դեսյատինին 8 փուլթ. այն ինչ ձեռքով ցա-
նելիս դեսյատինին գնում է 12 փուլթ:

Մեքենայով ցանելիս սերմերն արտում հավասար խո-
րության են ընկնում ու ծլում են միաժամանակ ու մի
բարձրության: Ձեռքով ցանելիս սերմերի մի մասը խորը
թաղվում կամ յերեսն է մնում ու չի ծլում:

Մերմնացան մեքենայով ցանքսը լավ է դուրս գալիս:
Սերմը սերմին չի խեղդում, բոլոր սերմերն ել ազատ ա-
ճելու տեղ ունեն:

Շարքերը լայն յեղած դեպքում անպետք խոտերը կա-
րելի յե բազմանել:

Մեկի ուժը չի պատիլ սերմնացան մեքենա գնելու.
բայց վոր շաավոր լինեն—ամեն մեկին բիչ ծախս կնստի:

Նոր առավոտ

Ինչ եմ անում մենակ կյանքը,
վոր խեղճ մնամ ու զրկված.
ձեռքս կը տամ իմ ընկերոջ
ու միշտ կանեմ սիրտս բաց:

Դե, ոանչպարներ, վոտքի յելնենք,
մեզ է սպասում խամ դաշտը.
մեկի տեղը հազար յելնենք,
մեզ է կանչում նոր կյանքը:

Տերտերի գործադուր

Տեր Բարսեղը դժգոհ էր.
իրեն տված հասույթը
շատ բիչ էր:
Հին որերից սովոր էր
լցնել իր ամբարները:
Ել քարոզել,
ել բողոքել,—
վոչինչ չոգնեց...
Բայց լսել էր,
թե բանվորն ել
մի բան վոր ուզեր
ու չարանար,
գործազուլ
կը հայտարարեր:
Ուզեց ինքն ել
ճիշտ այդպես
հայտարարել
գործազուլ:
Գրիստոսի հարույթյունից
մի որ առաջ
յեկեղեցու դուռը կողպեց,
տիրացուին հեռն առած
տանը նստեց,
հայտարարեց
գործազուլ.—

Մինչև տան գլուխ
իրեն չեն տա
մի-մի վոչխար,
տիրացուին՝
մի-մի հատ ուլ,—
աղոթք չկա,
յեկեղեցու դուռը չի բանա:
Տեր Բարսեղը շատ հույս
ուներ.—

գատիկ որ էր.
գատիկ որով յեկեղեցու
դուռը փակել,—
գիտե՞ք թե եզ ինչ ասել
էր...

— Ինչ պիտի անեն,
ուզեն չուզեն, պիտի բե-
րեն...

Կը կակղեն...
Չատիկ որով
ժողովուրդը հավաքվել,
թունդ վիճում է,
մտածում է՝
ինչ անել...
Ել թեր ու գեմ...
վրճուում են եղպես թողնել,

մինչ տերտերը խելքի գա,
ինքը բանա...
Տեր Բարսեղը տանը նստել
սպասում է՝
թե գյուղացին հավա-
քում է
վոչխար և ուլ
գոււը բերի...
սպասում է մինչ իրիկուն:
...Վայ ե տալիս իրեն
գլխուն.—

փնասվել եր ելի ինքը.
ձեռքից եղպես
բաց եր թողել
առուտուրի հաջող որը,
պատարագնու տնորհները,
«գյալուրները»:
Գործադուլը
տունը քանդեց.
գործադուլը
վիժեց:

Կովի կերակրելը

Գյուղացին իր կովը կերակրում է գլխավորապես խո-
տով, դարմանով և քիչ է տալիս աղած-մանրած կեր՝ ա-
լյուր, թեփ, քուսպ: Խոտը շատ անգամ գետին է թափվում
և կովը կերի մի մասը կոխկրտում է: Կովերը կապում են
մուկ գոմերում, խնդրված ողի մեջ:

Կովից շատ կաթ ստանալու համար պետք է ամենից
առաջ վերացնել խնամքի հիշված թերությունները, պետք
է գոմը տաք և լուսավոր լինի: Իսկ ամենագլխավորը, պետք
է կեր տալ կովին նրա կենդանի բաշի համեմատ:

Մեղանում կովի միջին կենդանի բաշը 9 փութ է, իսկ
տված կաթը 8 գրվանքա:

Այս տեսակ կովին որեկան պիտի տալ 18 գրվանքա
խոտ, վորպեսզի նա չնիհարի և կաթը չպակասեցնի: Սովո-
րաբար կովին այդքան խոտ չեն տալիս, այլ ավելացնում են
ավելի ուժեղ կեր, որինակ՝ թեփ (նայիր հաջորդ գլուխը) և
կամ ավելի անուժ կեր, որինակ՝ ծղնոտը, բալումը:

Իանիայում գյուղացիները հաշվել տեսել են, վոր 1
գրվանքա թեփով կարելի չէ փոխարինել 3 գրվանքա խոտ
կամ 6 գրվանքա ծղնոտ-բալում:

Մի կերը մյուսով փոխարինելու ժամանակ, վորպեսզի
հաշիվը ճիշտ լինի, ընդունված է միշտ ել ուժեղ կերով,
որինակ՝ թեփով, ալյուրով կազմել կերի հաշիվը, մի
գրվանքան կերի մի միավոր հաշվելով: Այդպիսով 18 գրվ.
խոտն անում է 6 միավոր կեր, վորովհետև մի միավոր
կերը հավասար է 3 գրվ. խոտի:

Այս 6 միավոր կերը կարելի չէ գանազան տեսակի
կերերից ստանալ:

Կեր տալիս են այսպես.

Տարիների փորձից պարզվել է, վոր կենդանի բաշը
3 փութ մսին պետք է որենը 1 միավոր կեր: Այդ՝ մաք-
մինն աննվազ պահպանող կերն է: Դրանից կովը կաթ չի
շինում, բայց չի յել նիհարում:

Կաթ ստանալու համար կովին պետք է տալ յուրաքան-
չյուր 3 գրվանքա կաթի դիմաց մի միավոր կեր՝ չհաշված
յուրաքանչյուր 3 փութ բաշին տված մեկական միավոր
կերը:

Իմ կովը տալիս է որենը 12 գրվ. կաթ և ունի 12 փութ
եւ կենդանի բաշ: Հաշվենք տեսնենք՝ բանի՞ միավոր կեր
պետք է տալ նրան:

Յերբ հաշվեք, կը տեսնեք, վոր իմ կովին 8 միավոր
կեր է հարկավոր:

Ծանոթություն. Կովը կռուել դժվար է, ուստի քաշը վորոշում
են չափելով: Չափում են ուսի ծայրից մինչև պոչի արմատը՝
դնելով կովը հորիզոնական դրության մեջ. ասենք յեղավ 16 վեր-
շուկ: Ապա չափում են իրանի հաստությունը առաջին վտաների
թիակների յետևից. ասենք յեղավ 30 վերշուկ: $16 \times 30 = 600$ գրվ.
կամ 15 փութ—կը լինի կովի քաշը:

- Հարցեր 1. Վորոշեցեք ձեր կովի բաշն ու կաթի քանակը:
2. Հաշվեցեք՝ որական քանի՞ միավոր կեր պիտի տաք
ձեր կովին:
3. Կազմեցեք կերի միավորների աղյուսակ ձեր կովի
համար ցածում բերած որինակով:

Ցանկ կերի միավորների

Ուժեղ կեր.

- | | |
|--------------------------------|------------|
| 1 գրվ. ալյուրեղեն | } 1 միավոր |
| 1 » թեփ | |
| $\frac{3}{4}$ » քուսպ՝ կտավհա- | |
| տի, բամբակի և արևա- | |
| ծաղկի: | |

Չոր յեվ կոշտ կեր.

- | | | |
|---------------------------|---|----------|
| 3 գրվ. մարգագետնի չոր խոտ | } | 1 միավոր |
| 4 » ճահճային » » | | |
| 2-2 1/2 գրվ. չոր առվույտ | | |
| 4-5 » գարնցան դարման | | |
| 5-6 » աշնցան » | | |
| | | |

Կանաչ կեր.

- | | | |
|-------------------|---|----------|
| 12 գրվ. կանաչ խոտ | } | 1 միավոր |
| 8 » » առվույտ | | |
| 15 » բազկաթեր | | |
| 13 » կաղամբաթեր | | |

Հյութեղ կեր.

- | | | |
|------------------|---|----------|
| 8-10 գրվ. բազուկ | } | 1 միավոր |
| 8 » գազար | | |
| 6 » կարտոֆիլ | | |

- | | | |
|-----------------|---|---------------------|
| Կովիս տալիս եմ՝ | } | 6 գրվ. 2 միավոր խոտ |
| | | 2 » 1 » առվույտ |
| | | 6 » 1 » դարման |
| | | 3 » 4 » ըուսպ: |

Կովս չի նիհարում և շարունակում է միաշափ տալ իր կաթը:

Բանջարաւնոցի ոգուտը

Բանջարանոցը պահանջում է աշխատանք և գիտություն: Բանջարանոցի համար լավ հող է պետք, ուժեղ պարարտացում, ջուր և լավ գործիքներ:

Բանջարանոցը պիտի պատրաստել աշունքվանից:

Մի կոկիկ բանջարանոց կարելի յե սարքել 80 մարգից, յուրաքանչյուր մարգը 1 1/2 արշին լայնության և 10 սաժեն յերկարության: Ամեն մարգին 1 սայլ գոմի աղբ պիտի տալ:

Գլուխ կաղամբը 1 մարգից տալիս է 100 գլուխ՝ 5 կուպեկ արժողությամբ յուրաքանչյուրը:

Մի մարգ տալիս է 5 ուլբլի ոգուտ:

Մի մարգից 3 փութ սեխ է ստացվում՝ փութը 2 ուլբլի. ուրեմն մի մարգից 6 ուլբլի:

Մի մարգից 2000 հատ վարունգ է ստացվում. 100-ը 2 ուլբլի. ուրեմն մարգից 4 ուլբլի:

Բողկը ցանում են մարգի կողքերին. մի մարգից 50 կուպեկ միշտ տալիս է:

Հարցեր. Կագմեցեք աղյուսակ ձեր սերմած բանջարների. վորքան էք հավաքում, վորքան ծախսում և վորքան թողնում ձեր տնտեսության համար:

Կարտոֆիլ

Մեղանից 100 տարի առաջ գյուղացիք կարտոֆիլին տատանի ինձոր անունն եյին տալիս և նրա ուտելը մեղք համարում:

Այժմ տեղեր կան, վոր գյուղացու հողի մեծ մասը կարտոֆիլն է բռնում:

Կարտոֆիլ տնկելը շատ ոգտավետ է: Մի դեսյատին կարտոֆիլը 3-4 անգամ ավելի ոգուտ է տալիս, քան հացահատիկը: Կարտոֆիլին պետք է ուժեղ, թեթև և մաքուր հող:

Կարտոֆիլի հողը լավ մշակում են և տնկելուց հետո շարունակ բաղհանում, փխրացնում են:

Հաջորդ տարում կարտոֆիլի հողը շատ հարմար է հացահատիկ ցանելու, վորովհետև անպետք խոտերը բաղհանվել են: Կարտոֆիլի հողը պարարտացնում են մոխիրով: Կարտոֆիլից պատրաստում են ալյուր, շաքարաջուր, ոսլա:

Բանքակ

Հայաստանը բամբակ ցանելու լավ շրջաններ ունի: Յերևանի գավառում—Ղամարլու, Հրազդան, իսկ Եջմիածնում՝ Ղուրղուղուլի, Զանգիբասարի և Սարգարաբաղի շրջանները:

Պատերազմների շնորհիվ բամբակի արդյունաբերությունը ընկավ: Այժմ, յերբ բանվորն ու գյուղացին կպել են շինարար աշխատանքի, պետք է բամբակ մեծ չափով ցանել:

Ունենալով մեծաքանակ բամբակ՝ մենք հացի կարիք չենք զգա:

Խորհրդային Ռուսաստանը հաց շատ ունի, բայց բամբակ չունի: Յերբ մենք բամբակ ունենանք, ամեն ինչ կունենանք՝ հաց, հագնելիք, մեքենաներ, մանգաղ, գերանդի և այլն:

Այդ ամենն ել իրենց փոքրով կը գան բամբակի մոտ: Բամբակը թանգացել է թե Խորհրդային Ռուսաստանում և թե ամբողջ աշխարհում, իսկ հացը եժանացել է, ուրեմն այժմ ձեռնտու չե բամբակ ցանել և փոչ թե ցորեն:

Ինչ կարելի չեր ձեռք բերել պատերազմից առաջ մի փութ բամբակով՝

Յորեն 12 փութ,

կամ չիթ 70 արշին,

» նավթ 10 փութ,

» աղ 30 փութ:

Ահա թե ինչու Հայաստանի բամբակագործության կոմիտեն աշխատում է բամբակի ցանքսերը ավելացնել:

Ճախարակ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
մանիր սպիտակ մալանչներ,
մանիր թելեր հաստ ու բարակ,
վոր յես հոգամ իմ ցավեր:

Ձեթ եմ ածել ականջներդ,
նոր շինել եմ շրավիկ-
դեն, շուտ շարժիր լայն թևերդ,
փոստեր շինիր սրուլիկ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
լիսեռնիկդ պտախր,
մանիր թելեր հաստ ու բարակ,
իլկիդ վրա փաթաթիր:

Տիգրանիկս գուլպա չունի,
հանդ է գնում փոտաբաց:
Գաբրիելս չուխա չունի,
միշտ անում է սուգ ու լաց:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
մանիր սպիտակ մալանչներ,
մանիր թելեր հաստ ու բարակ,
վոր յես հոգամ իմ ցավեր:

Ընկ. Լենինի գործը

Վողջ աշխարհի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները մի առաջնորդ ունեցին. դա ընկ. Լենինն էր: 30 տարի շարունակ նա բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության ազատագրման գործ զուլին ու սիրան էր, նա յեր կովի սլան գծողը:



Յերբ բանվոր դասակարգը հաղթվում էր, Լենինն էր, վոր խորհուրդ էր տալիս չհուսահատվել, այլ մի փոքրը նահանջել՝ կռիվը նոր ուժերով վերսկսելու համար: Այսօր բանվորներն ու գյուղացիներն իշխանությունն իրենց ձեռում ամուր պահած ունեն: Բայց ինչպես են պահում: Իրա պատասխանն ել ընկ. Լե-

նինը տվեց: - Խորհրդային իշխանությունը պահելու համար բանվորն ու գյուղացին միասին պիտի գործեն: Նրանք ձեռք ձեռքի տված պիտի աշխատեն մեր յերկիրը շենացնել: Միայն այս պայմանով խորհրդային իշխանությունը կարող է հաստատ մնալ:

Ահա թե ինչու այդքան թանգ էր մեզ բոլորիս համար ընկեր Լենինի հիշատակը:

Նա մեռավ, բայց գործը կենդանի չե:

Լենինի կենսագրությունը

I

Վլադիմիր Իլյիչ Ուլյանով-Լենինը ծնվել է 1870 թվին Ռուսաստանում—Սիմբիրսկ քաղաքում։ Նրահայրը ուսուցիչ էր և հետո ժողովրդական դպրոցների տեսուչ ու վայելում էր ժողովրդի սերն ու հարգանքը։

Լենինը իր միջնակարգ ուսումը ավարտեց 17 տարեկան հասակում։ Այդ ժամանակ էր, վոր նրա մեծ յեղբորը—Ալեքսանդրին մահվան պատժի յենթարկեցին Ալեքսանդր III-ի դեմ մահափորձ կատարելու համար։ Այս ընտանեկան վիշտը խիստ ազդեց յերիտասարդ Լենինի վրա, և նրա մեջ առաջ յեկավ այն միտքը, վոր պետք է ազատել ժողովրդին թե թագավորից և թե ամբողջ ճնշող դասակարգից։

Լենինը թեև մտավ համալսարան, բայց այնտեղից շուտով արտաքսվեց ուսանողական շարժման մեջ մասնակցելու պատճառով և միայն 4 տարուց հետո նրան հաջովեց համալսարանում քննությունն տալ։

II

1893 թվին Լենինը գնաց Պետերբուրգ (այժմ կոչվում է Լենինգրադ) և այնտեղ սկսեց աշխատել բանվորական գործի համար։ Նա կազմակերպեց բանվորների գաղտնի միություններ և նրանց սովորեցնում էր Մարքսի ուսմունքը։ Բայց շուտով Լենինին իր ընկերների հետ ձերբակալեցին և մի տարուց ավելի բանտում պահելուց հետո՝ արտոբեցին Սիբիր 1897 թվին։ Յերեք տարի Սիբիրում մնալուց հետո Լենինը գնաց արտասահման։ Այստեղ նա սկսեց կազմակերպել բայլշևիկների կուսակցությունը։ 1905 թվին սկսվեց ուսական առաջին հեղափոխությունը, բայց զինվորների և գյուղացիների անգիտակից լինելու պատճառով շաջովվեց։

Լենինը անընդհատ շարունակում էր ղեկավարել բանվորական շարժումները։ 1917 թվին կատարվեց փետրվարյան հեղափոխությունը. թագավորը տապալվեց, բայց իշխանությունը մնաց կեղեքիչ դասակարգի, բուրժուաների և կապիտալիստների ձեռքը։

III

Լենինը այդ ժամանակ վերադարձավ արտասահմանից, անցավ բանվորական շարժման գլուխը և կազմակերպեց

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը։ Իշխանությունը անցավ Խորհուրդների ձեռքը։ Բանվորները, գյուղացիներն ու կարմիր բանակը միացյալ ուժերով ձեռք բերին իրենց ազատությունը Լենինի առաջնորդությամբ։ Բայց յերկարատև աշխատանքը և կրած տանջանքները կարճեցին մեծ մարդու կյանքը։ 1924 թվի հունվարի 21-ին չկար այլևս Լենինը։ Մեռավ Լենինը, բայց նրա ստեղծած գործը կա և կմնա. այդ գործը շարունակում է Լենինի կազմակերպած Կոմունիստական կուսակցությունը։

Աշխատանքի յերգը

2. ՉԱՊՈՐՑԱՆ

Մի յերգ զիտեմ յես աննման—
հզոր մուրճի թափի նման,
վորոտի պես հատու, խրոխտ
մի յերգ զիտեմ յես աննման։


Հմայք ունի յերգս այնպես,
հոգսի ժամին թե վոր յերգես՝
թախիծ ու վիշտ կը չքանա—
լքված հոգուն նեցուկ է նա։

Հեյ, իմ յերգը միշտ աննման—
հզոր մուրճի թափի նման,
վորոտի պես հատու, խրոխտ—
մի յերգ զիտեմ յես աննման։

Ստեփան Շահումյան

Ստեփան Շահումյանը Բագու փոս զնելով՝ սիրելի դարձավ բոլոր բանվորներին։ Նրա դուները միշտ բաց էին կուսակցական և անկուսակցական բանվորների առաջ։ Նա

սիրված եր վոչ միայն իր համախոհ ընկերներէց, այլ և իր հակառակորդներէց: Մի դեպք նրա կյանքէց.—



Յերբ մի խմբակ՝ ճանաչելով Շահումյանին՝ վորոշել եր սպանել նրան, խմբակի անդամներից մեկը ծանոթանում ե Ստեփան Շահումյանի հետ ու գնում նրա հայերեն դասախոսությանը:

Գասախոսությունը լսելուց հետո նույն այդ մարդը յերգվեց իր կյանքը չխնայել

Ստեփանի համար և մտալ Կոմմունիստական կուսակցության մեջ:

1918 թվին Շահումյանը Կովկասի արտակարգ կոմիտարի պաշտոնով ապրում եր 2 փոքրիկ սենյակներում: Յերբ նրան հարց ալին. «Ինչպէս յես ապրում քաղաքի ծայրում, ուր ամեն մի բոպե կարող են վնասել քեզ», նա հանգիստ պատասխանեց.— «Այդ բանով յես չեմ հետաքրքրվում»:

Շահումյանը Կովկասի բանվորության ղեկավարն եր, և այդպես ել հեղափոխությունը անվանեց նրան:

Թանգագիւն ընկեր

Այժմ սովորեցիր դու գրել-կարդալ: Մեծ բարիք ե դա քեզ համար, չկորցնես: Սովորիր միշտ գիրք ու լրագիր ունենալ մտադ: Իրանցից անբաժան լինելով՝ գիտեցածդ ավելի հաստատուն կը դարձնես և մշտապես գրագետ կը մնաս:

Իրագիտությունը քեզ զվարճության համար չի պետք: Մեր առաջնորդ և ուսուցիչ Լենինն ասում եր. «Բանվորն ու գյուղացին կարդալ-գրելով պետք ե լավացնեն իրենց անտեսությունն ու իրենց պետությունը»:

Իբրքն ու լրագիրը կը տան բոլոր քեզ տանջող հարցերի պատասխանը: Իրբից ու լրագրից կիմանաս դու, թե ինչ-

պես գնես քո անտեսությունը, վոր վոչ կարտություն քո շես, վոչ աղքատություն:

19 15/VIII 24 թ.

Միրելի ընկեր

Քանի անգրագետ եյիր, գուրկ եյիր դու գիտակցական կյանքից: Հիմա դու վտար ես գնում նրա շեմքը: Դա մի մեծ տոն ե բանվորի և գյուղացու համար: Դու յել մեզ հետ մեկտեղ կուլիր անգրագիտության դեմ: Մենք մի ընկերություն ունենք՝ «Կորչի անգրագիտությունը»: Գյուկերություն ունենք՝ «Կորչի անգրագիտությունը»: Գյուկում լինես, թե գործարանում՝ մի բջիջ կազմակերպիր նրա համար: Հետևիր, վոր բոլոր անգրագետ ընկերներդ քեզ պես գրագետ դառնան:

Խնամք տար լիկկայանին, ուսուցիչ ու այբբենարան ճարիր նրա համար: Դու յել յեռանդուն գործով մասնակցիր Լենինի կտակի իրագործման. «Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակին վոչ մեկը անգրագետ չպետք ե մնա Ռուսաստանում»:

Չմոռանաս, ընկեր, վոր այս կտակը վերաբերում ե մեզ: «1930 թվին և մեր հեղափոխության տասնամյակին վոչ մեկը անգրագետ չպետք ե մնա Հայաստանում»:

19 20/VIII 24 թ.

Ընկ. Տրոցկու նամակը կարմիր գիւմորին

Մայիսի 1-ի առթիվ գրում եմ քեզ, և դու կարդում ես իմ նամակը: Իրագիտությունը կապում ե մեզ իրար հետ: Այդ ե նրա մեծ ուժը:

Այն բոլորն, ինչ մարդկային հազարավոր սերունդներ մինչև այժմ կատարել, սովորել, տեսել և զգացել են, գրված են գրքերում: Յեվ վորովհետև դու գրագետ ես, այդ բոլորը քեզ մատչելի յե:

Քեզ կարդալ-գրել սովորեցրեց կարմիր բանակը: Յեզբայրաբար շնորհավորում եմ քո այդ մեծ հաջողությունը: Այժմ դու ձեռքումդ ունես գիտության դռները բացող բանալին: Բայց տես՝ կես ճանապարհին կանգ չառնես: Ով կի-

սագրագետ ե, նա շուտ ե մոռանում և անգրագետ դառնում: Պետք ե սովորել առանց դժվարության, սահուն և ազատ կարգալ: Յուրաքանչյուր ազատ ըոպեյին պիտի կարգալ, գրել և վերջնականապես գրագետ դառնալ:

Ինչքան գեղեցիկ վոտանավորներ, յերգեր, պատմվածքներ, պատմական և գիտական գրքեր կան գրված.—մարդկային մտքի մի ամբողջ ովկիանոս: Յեվ դեռ ինչքան նոր գրքեր պիտի գրվեն: Չե՞ վոր մարդկությունը յերբեք կանգ չի առնում, այլ միշտ առաջ ե գնում:

Հենց վոր մեր յերկրի վերքերը բուժենք, բարձրացնենք մեր անտեսությունը, լավացնենք և գեղեցկացնենք մեր կյանքը, մեր ամբողջ ազգաբնակչությունը կազատվի տգիտության խավարից և կը շարժվի դեպի առաջ:

Նայիր, ընկեր, յետ չմնաս: Սովորիր, ժամանակ մի վատնիր: Հավասարվիր առաջավորներին:

1. Տրոցկի

Կարմիր բանակի կազմն ու խնդիրները

1. Կարմիր բանակը բաղկացած ե բանվորներից և այն աշխատավոր գյուղացիներից, վորոնք չեն շահագործում ուրիշի աշխատանքը:

2. Կարմիր բանակի կազմի մեջ մտնելու իրավունք չունեն բուրժուաները և սպեկուլյանտները:

3. Զինվորական հասակ ունեցող անհարազատ տարրերը կանչվում են բանակ վորպես սպասարկու, ոժանդակ աշխատանքներ տանելու համար, առանց զենք կրելու իրավունքի:

4. Կարմիր բանակը զինված մի ուժ ե, վորի առաջին խնդիրն ե Ս. Խ. Հ. Մ. (Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության) անկախության և ազատության ապահովումը ամեն տեսակի հարձակումներից:

5. Կարմիր բանակի մյուս նպատակն ե պաշտպանել բանվորների և գյուղացիների խաղաղ կյանքը և շինարար աշխատանքը շահագործողների բռնություններից:

6. Համերաշխությունը և փոխադարձ ոգնությունը Կարմիր բանակի շարքերում ամենաբարձր աստիճանի պիտի հասնի: Յուրաքանչյուր կարմիր բանակային պիտի

հիշե, վոր հաջողությունն ու հաղթանակը ձեռք են բերվում կարմիր զինվորների փոխադարձ ոգնությամբ:

Մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար:

7. Պատմության մեջ վոչ մի բանակ չի ունեցել այնպիսի բարձր նպատակ, վորպիսին ունի մեր Կարմիր բանակը: Այդ նպատակն ե— ազատագրել աշխատավոր գյուղացուն և բանվորին շահագործողներից:

Կարմիր յերդում

Հանդիսավոր խոսում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը մտնելիս

1. Յես, աշխատավոր ժողովրդի զավակս, Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության բաղաքացիս, ընդունում եմ բանվորական և գյուղացիական բանակի զինվորի կոչումը:

2. Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության և ամբողջ աշխարհի աշխատավորության առաջ յես պարտավորվում եմ պատվով կրել կարմիր զինվորի կոչումը, ուսումնասիրել ռազմական գործը և աչքիս լուսի պես պահպանել ժողովրդական և ռազմական գույքը փշանալուց և հափշտակումից:

3. Յես պարտավորվում եմ խստիվ և անշեղ պահպանել հեղափոխական կարգապահությունը և առանց առարկության կատարել բանվորական և գյուղացիական կառավարության իշխանությամբ նշանակված հրամանատարների բոլոր հրամանները:

4. Յես պարտավորվում եմ հեռու մնալ և հեռու պահել ընկերներիս այն բոլոր արարքներից, վորոնք վարկաբեկում են Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության բաղաքացու արժանապատվությունը և իմ բոլոր գործողություններն ու մտքերն ուղղել բոլոր աշխատավորների ազատագրման մեծ նպատակին:

5. Յես պարտավորվում եմ բանվորական և գյուղացիական կառավարության առաջին իսկ կոչին դուրս գալ պաշտպանելու Սոցիալիստական Խորհրդային Հանրապետու-

Թյունների Միությունն ամեն տեսակի վտանգներից և նրա բոլոր թշնամիների վտանգություններից, ինչպես և Սոցիալիստական Թորհրդային Հանրապետությունների Միության ժողովուրդների յեղբայրության և Սոցիալիզմի գործի համար մզած պայքարում չխնայել իմ ուժերը և նույնիսկ կյանքս:

6. Յե՛վ յե՛թե յես չար մտադրությամբ հրաժարվելու լինեմ իմ այս հանդիսավոր խոստումից, թող ինձ վիճակի՛ր ընդհանուրի արհամարհանքը և թնդ պատժի ինձ հեղափոխական որենքի անողոր ձեռքը:

Ինտերնացիոնալ

Յե՛լիք, ում կյանքը անիծել է,
ով ճորտ է, մերկ է և ստրուկ,
արդեն վառվում են մեր սրտերը,
արդեն կռվի յենք մենք ձգտում:



Սա յե մեր վերջին կռիվը
և պայքարը մեր հին,
Ինտերնացիոնալը
աշխարհը կը փրկի:

Այս հին աշխարհը կը քանդենք մենք
մինչև հիմքերը և հետո
մեր նոր աշխարհը կը շինենք
մենք, ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա յե մեր վերջին կռիվը... (կրկնել)

Վոչ վոք չի տա մեզ ազատություն —
վոչ խենթ հերոսը, վոչ արքան.
մենք պետք է մեր ազատությունը
խլենք մեր ձեռքով սեփական:

Սա յե մեր վերջին կռիվը... (կրկնել)



Printed and Published by
J. W. & J. S. GARDNER
No. 10, South Street, Singapore.

Հ. Ս. Ռ. Հ.
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Գրաստագրերի սերիա

1. Սուրխաթյան — Գրական գոհարներ—քրիստոմատիա (728 էջ), 1922 թ. Թիֆլիս (սպառված) Գինը 3ր. — 4.
2. Լ. Նիկոնով—Բուլյաի կյանքը—(սպարդ փորձերով և 12 նկարով), թարգմ. Ա. Տ.-Պ. (56 էջ), 1922, Յերևան, (սպառված) » — ր. 40 կ.
3. Եղիլյան յիվ ուրիշներ—Աշխատանքի զպրոց, Բ. տարի—մայրենի լեզվի դասագիրք (72 էջ), 1922 թ. Յերևան (սպառված) » — ր. 60 կ.
4. Ա. Մուշեղյան—Ինչպես կազմել հերբարիում » — ր. 10 կ.
5. Տ. Ռաշմանյան յիվ ուրիշներ—Դասընկեր, Բ. տարի—11-րդ տիպ (152 էջ), 1921 թ., Յերևան (սպառվ.) » — ր. 60 կ.
6. Նույնների—Դասընկեր, Գ. տարի—8-րդ տիպ. (184 էջ), 1921 թ., Յերևան (սպառվ.) » — ր. 70 կ.
7. Ա. Գարրիկյան—Բնագիտ. քարտեզներ, Բ. մաս, բացատր. տեղատու.—Անկենդան բնություն » — ր. 40 կ.
8. Ա. Գարրիկյան—Բնագիտական քարտեզներ, Ա. մաս, բացատր. տեղատու—Բուլյաի կյանքը » — ր. 40 կ.
9. Գ. Եղիլյան—Աշխատանքի զպրոց (ձեռնարկ) » — ր. 50 կ.
10. Վ. Գեմպրիլ—Ջննական յերկրաչափություն, թարգմ. Հ. Նավակատիկյանի (216 էջ), 1923 թ., Յերևան 2 ր. —
11. Սոփ. Մելիքյան—Գյուրոցական յերգեր, Ա. տարի (48 էջ), 1 ր. —
12. Դրամատիկացիան Ի՞ զպրոցում » — ր. 10 կ.
13. Դասընկեր Ա. տարի (Այբբենարան). Յերբորդ տպ. (64 էջ) 1923 թ., Յերևան 50 կ.
14. Կարմիր Արեւի—Բ. տարի, կազմեցին և խմբագրեցին Հ. Կարախանյան և Ա.Թ. Խնկոյան, (112 էջ), 1923 թ., Յերևան » — ր. 60 կ.
15. Կարմիր Արեւի—Գ. տարի, կազմեցին և խմբագրեցին Հ. Կարախանյան և Ա.Թ. Խնկոյան (152 էջ), 1923 թ., Յերևան » — ր. 80 կ.
16. Կարմիր Արեւի—Դ. տարի, պատկերազարդ, կազմեց և խմբագրեց Սուրխաթյան (192 էջ), 1923 թ., Յերևան 1 ր. —
17. Կարմիր Արեւի—Ե. տարի, պատկերազարդ, կազմեց և խմբագրեց Սուրխաթյան (206 էջ), 1923 թ., Յերևան 1 ր. 20 կ.
18. Կարմիր Արեւի—Զ. տարի (պատկերազարդ), կազմեց և խմբագրեց Սուրխաթյան (234 էջ), 1923 թ., Յերևան 1 ր. 80 կ.
19. Կարմիր Արեւի—Է. տարի կազմեց և խմբագրեց Սուրխաթյան (488 էջ), 1924 թ. Յերևան 2 ր. 80 կ.
20. Աշխատանք—Ընթերցարան բանվորների և գյուղացիների համար 60 կ.
21. Բեմ, Ստրուվի, Վոլիով—Հանրահաշիվ, Ա. և Բ. մաս, թարգմ. Արշակ Տոնյանի 1 ր. 75 կ.
22. Ա. Կիսկով—Տարրական յերկրաչափություն, թարգմ. Արշակ Տոնյանի 2 ր. 80 կ.

Գինը 25 կ.

Լույս տեսած զրքերը ծախվում են Պետհրատի գրատնտեսությունում

Տիրաժ 15000

Պետհրատի առաջին սպարան վաղաբուրժուական

2019

3474

«Ազգային գրադարան»



NL0060741

